

Հերման եւ Դորոթէա

(Շարունակութիւն եւ վերջ)

« Անահիտ »-ի նախորդ համարում արդէն ցոյց տուի, թէ ո՞րքան մեծ արժանիքներ ունի Գեօթէի այս պոէման, հետեւաբար անհրաժեշտ էր այսպիսի մի երկի նոր եւ չափածոյ թարգմանութիւնը: Մեր ցարդ ունեցած երկու թարգմանութիւններն ըստ ամենայնի անյաջող էին, քանի որ արձակ էին, իսկ իբր արձակ էլ, ոչ մի ոչ չունէին: Բարեբաղդաբար Պ. Պետրոսեանի նոր թարգմանութիւնն անհամեմատ բարձր է երկու նախորդներից. սակայն սա եւս անթերի չէ:

Արդէն անցեալ անգամ գիտեցի, թէ « Հերման եւ Դորոթէա »ի անյաջող մասն է նախերգանքը, եւ այդ՝ նաեւ այն պատճառով, որ առանց կողմնակի ծանօթութեանց, ինչն ըստ ինքեան վերցրած, անհասկանալի է. այս կէտից արդէն երեւում է, որ թարգմանիչը պարտաւոր էր մանրամասն եւ անհրաժեշտորէն օժանդակող ծանօթութիւններ դնել յատուկ անուանց, ինչպէս եւ անհասկանալի ակնարկութիւնանց մօտ ձիւղ է, Պ. Թարգմանիչը դրած է մի քանի նկատողութիւններ, բայց դրանք կամ երկրորդական են, կամ թէ խնդիրը շատ քիչ լուսաբանող. օրինակի համար՝ վերցնենք հէնց առաջին տողը.

« Ոճի՛ր եղաւ, որ միանգամ ոգեւորեց Պրօպերցն ինձ: » Նախ՝ « մի անգամ » խօսքի տեղ պէտք է դնել « երբեմն » կամ « վաճառակով » կամ « երբ եւ իցէ »: « imos » խօսքն այդ իմաստն ունի գերմաներէնում. ապա՝ Պրօպերցի մասին ծանօթութեամբ յայտնուած է, որ « Հոովմայիցի բանաստեղծ էր, որի եղբերգութիւնների ոգով Գեօթէի իւր « Հոովմական Նղերբագութիւններն » է գրել: » Դրանով իմանում ենք Պրօպերցի ո՞վ լինելը. բայց չենք հասկանում, թէ Գեօթէն ինչո՞ւ է նրա անունը յիշել իւր երկի հէնց առաջին տողում: Կարծում եմ, անհրաժեշտ էր աւելացնել նաեւ, որ Գեօթէի այդ ոգով գրած ոտանաւորների դէմ յարձակուել էին որոշ քննադատներ, նրան գատապարտելով,

որ ազդուել էր Հոովմայիցի բանաստեղծներից. եւ ահա վերոյիշեալ առաջին տողով Գեօթէն քննադատներին պատասխանում է. կարծես ուզում է այդ տողով պաշտպանել նաեւ « Հերման եւ Դորոթէա »ն, եթէ մէկը մտածէր ապագայում քննադատել, թէ ինչո՞ւ այժմ էլ Հոովմարտին է հետեւել:

Կամ թէ, դարձեալ Նախերգանքում, երբ Գեօթէն իւր պոէման սկսելուց առաջ բաժակ է առաջարկում, որ նախ քան գրքի ընթերցումը զուարթմանն ընկերները, աւելացնում է յանկարծ. « Թող մեզ ընկերակցի երգչի ոգին, որ շտապաւ պսակեց Լուիզային իւր արժանաւոր նշանածին հետ, որպէս զի մեզ հիացնէ ». այս տողի տակ հետեւեալ ծանօթութիւնն է գրուած. « Ակնարկում է Հայնրիխ Ֆոսսի « Լուիզայ » հովուերգութիւնը »:

Այդ ծանօթութիւնը եւս հերիք չէ հասկացնելու համար, թէ Գեօթէն նրբամիտ կերպով քննադատում է իրեն կարապետող Ֆոսսի դրած « Լուիզա » պոէման. հաւանում է նրան, բայց գտնում, որ բանաստեղծը շատ շտապ, յանկարծակի ամուսնացրեց իւր հերոսներին, եւ իրօք այդ պոէմայի զլխաւոր պակասութիւններից մէկն էլ այդ գիծն է. սակայն այդ դեռ հերիք չէ. Գեօթէն այդ ակնարկով, կարծես հասկացնել է ուղղում նաեւ, թէ ինքը շատ լաւ գիտէր Զերմանն ու Դորոթէան էլ շատ շուտով են պսակում, բայց արանցիմն անընական չէ:

Ինչերորդ երգի տակը թարգմանիչն իր կողմից նկատած է, « Բանաստեղծն առաջին անգամ է դիմում Մուսաներին. » այս տողերը ոչ մի նոր բան չեն ասում ընթերցողին, քանի որ շատ լաւ կը նկատեն, թէ երբ է Գեօթէն դիմում մուսային. եւ երկրորդ՝ սխալ է այդ նկատուութիւնը. չէ՞ որ հէնց պոէմային սկզբում, նախերգանքին մէջ արդէն Մուսային դիմած էր մի քանի անգամ: Եթէ այդ ծանօթութիւնը մինչեւ իսկ կարելի լինի գտնել մի քանի գատազրքերում տարածուած՝ դրա պատճառն էլ այն է, որ յաճախ առանց նախերգանքին են տպում այս պոէման. ապա, յայտնի է, որ « Հերման եւ Դորոթէա »ի նախնական տպագրութեան մէջ նախերգանքը հէնց Գեօթէի ցանկութեամբը դեռ չէր կցուած պոէմային, այդպէս էր խորհուրդ տուել նրան նաեւ Նիլ-

լէբը. ուրեմն եթէ նախերգանքը զուրս ձգուած լինէր, Պ. Պետրոսեանի ծանօթութիւնն այն ժամանակ միայն ճիշդ կը լինէր:

Խիստ հազուադէպօրէն պատահում են նոսեւ սխալ թարգմանուած ստղեր. այսպէս՝ ութը-րորդ երգում Հերմանն ու Գորթթէան սիրալատ հասնում են լուսնալող բլուրի լանջը եւ «*indem sie sich nieder, ein wenig zu ruhen gesetzt*» որ առանց այլեւալուծեան կը նշանակէ. «*Երբ նրանք նստան քիչ հանգչելու*», մինչդեռ Պ. Պետրոսեանը սխալօրէն թարգմանել է. «*Երբոր այլցկն այնտեղ նստաւ, որ մի փոքր շունչ առնէ.*» «*Sie*» բառը գերմաներէն կը նշանակէ ոչ միայն «*նէ*», այլ նաեւ «*նրանք*», եւ վերջոյնեալ նախադասութեան մէջ այս վերջին իմաստով է գործածուած. այսպէս միթէ տղեղ չէ՞ր լինի պատկերը, եթէ միայն աղջկիւր նրստած լինէր, իսկ պատանին ոտի վրայ մնար եւ ուղեւ Գորթթէայի ձեռքը բռնէր. ո՛չ, երկուսով նստում են լուսնալող բլուրի լանջին, որ մի փոքր շունչ առնէ:

Մի ուրիշ տեղ «*Richter*» բառը սխալօրէն թարգմանուած է «*իշխան*», այն ինչ «*գատաւոր*» կը նշանակէ, գոնէ արդի աշխարհարարում «*իշխան*» ասելով հասկանում ենք աւելի շուտ ազնուական ծագում ունեցող մէկը, կամ թէ գինւորական պետ, յամենայն դէպս ոչ թէ «*գատաւոր, երէց*» ինչպէս որ կը նշանակէ այս դէպքում: «*Կեանք վարել*» թարգմանութեամբ պէտք է հասկանալ «*կեանք վայելել*» որ բոլորովին տարբեր իմաստ ունի: Կամ թէ, «*Իսկ բառաչող կով ու ձիան պաշար էին բաժանում*», այստեղից կը հասկացուի որ ձիերն էլ են բառաչում, որ չէ. ապա «*պաշար*» խօսքը տեղ «*դարման, կեր*» խօսքերն անհրաժեշտ էին խորթ չը լինելու համար:

Բայց առականոր առացուածքներ թարգմանութիւնն աւելի մեծ խնամք կը պահանջէ, որպէս զի իմացուի, թէ սեղծ է եւ ընդունակ գործածուելու առօրեայ խօսակցութեան մէջ, եւ, եթէ կարելի է, այնպէս թարգմանելու է, որ նոյն իսկ մեզանում տարածուին այդ իմաստալից ու հակիրճ միտքերը. օրինակ, երբ Հերմանն մայրը մանուկ է պարտէզ, չտապ ներկայութեւ միւս կողմը, բայց եւ էլի այստեղ մի տղիպղ է արեւին դարձնում, այնտեղ

մի կաղամբ է թրթուրից ազատում, «*որովհետեւ գործունեայ կինը ոչ մի անողուտ բայլ չէ անում*», այս սիրուն ու կրթիչ ասացուածքը թարգմանուած է. «*որովհետեւ աշխոյժ կինը ոչինչ չի գուր չի անում*»:

Կամ թէ. «*Որդին շուտ ոտքի ելաւ. առաջը հրանը մօտեցաւ*», եթէ «*առաւ*» օտար բառի տեղ «*լուս*» էլ դրուէ, հերթը չէ, տեղն էլ պէտք է փոխել, որ չի հասկցուի, թէ զուտն էլ խօսիլ գիտէ:

Մի վերջին օրինակ եւս տամ ու բաւականանա՞նք այս մասին: Հերմանի հայրը շրջ բակից ներս է հրաւիրում զղիկիցներին, որ զով սենեակը մտնեն, «*արեւն այնտեղ չէ լուսաւորում*»: Իւր հոգեվարքին խնդ «*լո՛յս*» (*Mehr Licht!*) բազմազանից գիտնական Կեթթէն այդպիսի սխալ կարծիք յայտնել չէր կարող. այդ տողով թարգմանիչն ուղղում է ասել, սենեակին արեւ չէ տոնում. այն ինչ ասածից զուրս է զալիւ, որ սենեակը խաւար էր, կամ թէ լոյսը արեւից չէ ըզխում, կամ թէ թերեւս ցերեկն իսկ ճրպէ ինչ վատած:

Այժմ դանիշը տաղաչափութեանը, որ այնչափ մեծ տեղ է բռնում ո եւ է պօէմայի արտաքին վայելչութեան խնդրում:

Այս նոր թարգմանութեան իւրաքանչիւր տողն ունի տասներկնգ վանիկ, բաժանուած չորս հատածի, այսինքն՝ 4+4+4+8:

Ինչպէս յայտնի է իւրաքանչիւր հատածի վերջին վանիկին վրայ պէտք է չեղտ լինի. բայց այս թարգմանութեան մէջ բազմաթիւ հատուածներ վերջանում են առանց չեղտի, օրինակ՝

«*Որովհետեւ աշխոյժ կինն՝ ոչինչ չի գուր չի անում*»

«*Շատ սիրուն է մեր նոր կառքը. . . .*»

«*Երբոր աղջկին այնտեղ նստաւ, որ մի փոքր շունչ առնէ*» եւ այլն:

Բայց այդ չափի ընտրութիւնն էլ յաջող չէ, որովհետեւ հակառակ ըսվանդակութեանն ու բնագրին, աւելի շուտ՝ թեթեւ, քնարական է, քան լուրջ ու պատմողական, հաւ թէ ինչո՞ւ. իւրաքանչիւր տողում չորս հատածից չորրորդը միշտ երեք վանիկ ունի եւ դա պատճառ է լինում սպասուողին: Եւ ինչ թողնելու, թէ թարգմա-

նութեան ամէն մի տողը բաղկացած է երկու փողբիկ և առանձին տողերից, մէկը եօթը վանկանի, միւսն ութը վանկանի. այսպէսով ստացւում է՝

Ոնիր եղա, որ մի անգամ
Ողևորեց Պրօպերցն ինձ .

Դրա հետեւանքն էլ այն է լինում, որ եօթը վանկանի տողը ամէն մի փայլափոխում շտապեցնում է, թևեւեւացնում տպաւորութիւնը, որովհետեւ չափի թողած ազդեցութիւնը չէ կախուած տողի ամբողջութեան ունեցած վանկերի թուից, ո՛չ, այլ հատածնեցի երկարութեան եւ կարճութեան խնդրից :

Արդ եթէ Պ. Պետրոսեանի տաճար հինգ վանկերից բաղկացած տողերը, փոխանակ չորսի երեք հատած միայն ունենային, ապա շատ աւելի ծանրակշիռ կը դառնար տպաւորութիւնը, քանի որ մէջուրեղից կը վերանար վերջին հատած կազմող երեք վանկը և կ'ստանայինք 5+5+5 . ինչպէս էլ որ լսենք, ամէն մի հինգը, առանձին վերջրած իսկ, արդէն լուրջ է և պատմողական ոտանավորի յարմար :

Ասածիս աւելի համոզուելու համար՝ վերջընենք մի քանի տող այս նոր թարգմանութիւնից. օրինակի համար, երբ Հերման ու Դորոթէան թեւ թեւի տուն են վերադառնում վերջաւայսին .

«Գրեւոր էին նոցա մանող արեգակի դէմ առ դէմ,
«Որ Յաղչում էր ամպերի տակ մրկալորով, Փանքրում»
«Եւ երբեմն բողի տակից իւր բոցավառ հայեացքով
«Գալաթի վերայ խորհրդաւոր իրեն փայլն էր տարածում .
«Հերմանն ասաց. — Սպառնացող փոթորիկը երանի
«Վարկուս, հեղեղ չժափէ ցած, որովհետեւ լաւ հուճեկայ .
«Նոցա երկուսն հրճուում էին ալեծածան հասկերով,
«Որ անցնելիս մինչեւ նոցա բարձր ուսերն էր հասնում:»

Այս միեւնոյն կտորը փորձեմ նորից թարգմանել, այլ չափով եւ առանց չղզուելու բնազդից. տեսնենք տպաւորութիւնը չի՞ ներգաշ-նակուել գրուածքի իմաստին .

Եւ զոյնն այսպիսով կ'երթար մայրամուտ արեւի հանդէպ,
Որ խոր կը Յաղչէր ամպերի միջին, մրրիկ գոծեւրով,
Եւ բողի տակէն մերթ հոս, մերթ ալ հոս շկիւնած հայեացքով
Ու խորհրդաւոր կը մաւաղայծէր այն դաշտիկ վերայ :
— Ինչ ըստաւանացող փոթորիկն էրնէ՛կ — Հերմանը խօսեց —
Գեղեցիկ հասկին չը բերէր կտրուաւ և ուժգին տարափ —
Ու բարձրածան հնձէն կ'անցնէին, որը կը հասնէր
Գրեմէ՛մ մինչև երկար ճառակներն, ու կը ճրճուէին .

Սակայն Պ. Պետրոսեանի թարգմանութիւնը, հակառակ այդ բացառիկ թերութեանց, ունի ներքին շատ լաւ արժանիքներ . զրանցից ամենամեծն այն է, որ աշխատած է հարազատ մնալ բնագրին . ապա՝ մաքուր հայերէնով է թարգմանուած, մի բան, որ այնչափ հաղուադէպ է մեզանում : Արժէր, որ այս գրքովը տարածուէր հայ ժողովրդի բոլոր խաւերումն անխտիր. թէև գրքովի ձևը քիչ տգեղ լինէր, բայց զինն էլ սուղ չէ :

Փարիզ ՄԱՄԻՐԻ ԻՄԱՏԵՆՃԵԱՆ

ՔԱՌՈՒԼԿ ԵԿԵՂԵՑԻՆ

ԵՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ա.

Գրիտտոնէութիւնը՝ իբրեւ ճշմարիտ ազատութեան, հաւատարմութեան, եղբայրութեան մի նոր վարդապետութիւն, երբ սկսուեց Քաւորուել, ահաբեկեց ժամանակի պետերին ու մեծերին : Եսական, բռնակալ, քրիստոնէական և ապաշտ գահակալներն ու իշխանները, հաւուսներն ու քրմերը միացրին իրենց ուժերը խանձարուել մէջ խղրղւելու այդ ոչ մի իշխանութիւն, ոչ մի հարստութիւն, ոչ մի անսխալաւորութիւն չճանաչող խեղճ կրօնը : Հաւաքածանք, պատիժ, բանտ, արիւն, խաչ եղանակով նոր վարդապետութեան քարոզիչներն ու հետեւողներն վիճակի ու բաժինը. Եւ այս կտրուտեւեց այնքան, մինչ որ մի կողմից հալածողներն ստիճաններն ու սրերը խոնարհուեցին հաւաքածողների համբարատարութեան եւ անձնազոհութիւնների առաջ եւ միւս կողմից հեղ, բայց անյողգողը նազովբացու հետեւողները զիրարմեքութիւն տուին իրենց վարդապետութեան :

Այսպիսով՝ գահակալներն ու իշխանները, հաւուսներն ու քրմերը իրենք մկրտուեցին, ողողուեցին նոր քարոզիչների գաղափարներով .